ՁԵԿՈՒՑՈՒՄՆ

ԲԱԳԻԱՑ Հ. ԿՈՒԼՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ ՓՈԽԱՆՈՐԴԻ ՈՒՂՂԱԾԸ

Սորա հետ պատիւ ունիմ ներկայացնել յարգելի Միութեանդ ընդհանուր տեղեկագիր Ալէքսանդրապօլի Փոխանորդութեան դպրոցների մասին, որոնք հասնում են 43-ի: Այս 43 դպրոցներից Կուլտուրական Միութիւնը նպաստ տուել է ութ դպրոցի այն է՝ Եաղուբլի, Ղշլաղ, Խլի-Ղարաքիլիսա, Դահարլի, Արթիկ և Բաշ-գիւղ, որոնք և այս տարի ունեցել են կանոնաւոր ուսումն և վերջացրել են սովորական ժամանակին, այն է յունիսի 1-ին, ակնկալելով յաջորդ տարիների համար ևս ստանալ նոյնպիսի նպաստ դպրոցների կանոնաւորութիւնը չխախտելու համար: Բացի այս վեց բացուած դպրոցներից Կուլտուրական Միութիւնը նպաստել է Ագքիլիսա և Զիթիհանքով գիւղերի դպրոցական շէնքերին, որոնցից առաջինը կառուցուում է, իսկ երկրորդը՝ մնում է միայն տախտակամածել. հետևաբար սեպտեմբերին երկուսն էլ պատրաստ կլինեն ուսումն սկսելու:

Մի դպրոց պահուել է պ. Տ. Ափրիկեանի հաշուով Նորաշէն գիւղում:

Ձեզ յայտնի է իմ արդէն տապրիլի 4-ին № 704 գրութիւնից, որ մի քանի գիւղեր խրախուսուած այն նպաստից, որ Կուլտուրական Միութիւնը տուել է վիճակիս մի քանի գիւղերին, մինչև իմ Ալէքսանդրապօլից մեկնելս, այն է մինչև տարեսոյս փետրուարի 16-ը, ներկայացրել էին վեց համախօսականներ Օլթաքիլիսայի, Մեծ-Սարիարի, Թոփաղլուի, Ներքին Ղանլիճայի, Ջաջուռի և Դիւզքեանդի հասարակութիւնները, որոնք ես պատիւ ունեցայ վերոյիշեալ գրութեանս հետ ներկայացնել Միութեանդ Կրթական Մասնաճիւղին խնդրելով տնօրինել յատկացնել նպաստ դրանց ևս եկող ուսումնական տարում այն տեղերումն էլ դպրոցներ բանալու համար:

Մինչև այժմ ես ստացել եմ զարձեալ չորս համախօսական, որոնք նոյնպէս դիմելով ինձ խնդրում են իրանց գիւղերը անտես չանել այն է՝ Հոռոմ, Ղարալ, Մեջիթլի և Սամուրլի։

Բացի այս համախօսականներից հինգ գիւղերի եկեղեցական հոգաբարձութիւններ խնդրում են իրանց գիւղերում ևս դպրոց բանալ կոմունակի նպաստներով, խոստանալով ծախքերի մնացածը լրացնել տեղական միջոցներով, այդ գիւղերը հետևեալներն են. Մեծ Բեափանակ, Շիրվանջուղ, Փոքր Պարնի, Հաջիխալիլ և Ճղիլաբ։ Կան և մի քանի գիւղեր, որոնք դրաւորապէս չեն դիմել և իրանց միջոցներով են դպրոց պահում այն է՝ Համզաչիման, Մեծ Ղարաքիլիսա, Համամլու և Հաբիճոյ վանական դպրոցը։ Այսպէս ուրեմն, վիճակիս մէջ 4 դպրոց գոյութիւն ունեն իրանց միջոցներով, 8 դպրոց պահում են Կուլտուրական Միութեանդ ձեռնտուութեամբ, 1 դպր. Ս. Ա.փ. միջոցով, 10 գիւղական հասարակութիւններ խնդրում են նպաստ դպրոց բանալու ապահովելով մնացած ծախքերը և 5 հոգաբարձութիւններ նոյն խնդիրն են անում իրանք երաշխաւորելով պակասը լրացնել։

Սակայն աչքի առաջ ունենալով, որ վիճակիս աղգաբնակութիւնը չափազանց խաւար է և կարօտ ուսման, ես յանձնարարեցի քաղաքիս ձեռնհաս քահանաներից մինին՝ Ներսէս Ք. Նիկողոսեանին, որ շրջելով վիճակիս մի քանի գիւղերը յորդորի նրանց դպրոց բանալու մասին հոգալ և նրա ամսիս 21-ին և 28-ին ներկայացրած զեկուցումից երևում է, որ Ղուլիջան, Նոր Արթիկ, Սեօնգիւրլի, Բողագբեասեան, Սեօղիւթլի, Մահմուտջուղ, Մեծ Արխավլի, Մեծ Պարնի, Աւգիրեկ և Որդնաւ գիւղերը կազմել են համախօսականներ, որոնք տանուտէրից զեռ վաւերացրած չլինելով, չեն ներկայացրել ինձ։

Դպրոցների անհրաժեշտութիւն ունեցող գիւղերի ցանկը լրացնելու համար պիտի ասեմ, որ մի քանի գիւղեր խուլ են մնացել իմ կոչին և ամենևին չեն հետաքրքրուել գալու դպրոցի մասին խորհրդակցելու, բայց վի-

ճակիս կարիքների առաջ մեղանչած չլինելու համար դրանց ևս մոցրել եմ ցուցակի մէջ. այդպիսի գիւղերն են՝ Ղոնախղուան, Ղազանչի, Թոմարդաշ, Ղզլդոչ և Ղազարապատ: Առաջին երկուսն ուսումնարան պահում են և այժմ, նոյն իսկ Ղազանչին յարմարաւոր շէնք էլ ունի, Թոմարդաշը նոյնպէս դպրոցի բոլոր պարագաներն ունի, Ղազարապատը հարուստ գիւղ է և բանաստեղծ Ա. Իսահակեանի հայրենիքը, որին պարտաւորացրել եմ հոգալ իրանց գիւղի համար, իսկ Ղզլդոչը հեռու սարերում ընկած լինելով, անհրաժեշտ է այդ անթափանց խաւարի մէջ գէթ լուսոյ նշոյլ մոցնել և որովհետև ոչ շէնք ունի և ոչ միջոց, ուստի թէ շէնքի մասին և թէ ուսուցչի ռոճկի մասին ամբողջապէս պիտի հոգալ դրսի նպաստով:

Եզրափակեմ ցուցակիս մէջ յիշուած գիւղերի ցանկի մասին ասելիքս: Յարգելի Միութիւնդ նկատում է որ արդէն գոյութիւն ունին 13 դպրոց (եթէ կ. Միութիւնը կշարունակի ըստ իւր խոստման արդէն բացուած 8 դպրոցին նպաստները տալ) և անհրաժեշտաբար պիտի բանալ այլևս 30 դպրոց, որոնցից 10-ի համախոսականը կայ 10-ինը կազմուել է և ինձ հասցնելը ժամանակի խնդիր է, 5 հոգաբարձութիւնների դիմումները կան մօտս և միայն 5 գիւղեր որ և է գրաւոր դիմում կամ խոստումն չեն արել:

Ինչպէս տեսնում է յարգելի Միութիւնդ նոր բացուելի դպրոցներից շատերի համար ես նշանակել եմ նպաստը առնուազն 300 ռ., որովհետև ինչպէս ապրելի 4-ին № 704 գրութեամբս էլ յիշատակել եմ, խիստ դժուար կացութիւն է ստեղծուում, երբ մենք տալիս ենք միայն 200 ռ. նպաստ. նամանաւանդ, որ շատ տեղեր դպրոցական շէնք չկայ, դպրոցական կահկարասի չկայ, իսկ գիւղացին հնարաւորութիւն չունի այս բոլոր ծախքերն իր վրա վերցնել և դլուխ տանել: Մի քանի գիւղերի տնտեսական դրութիւնն ի նկատի ունենալով, ես ծանօթութեան բաժնում առաջարկել եմ դպրոցական շէնք կառուցանելուն էլ նպաստել, իսկ երկու լեռնամասերում գտնուած գիւղերին՝ Սա-

մուրլի և Ղզլղոչ նպաստը տալ 400-ական ռուբլի։

Ես Հառիճի վանական դպրոցի վրա առանձին ուշադրութիւն եմ հրաւիրում։ Իբրև կենդրոն բանալ անշուշտ գիւղատնտեսական բաժին, նա տարեկան իր միջոցներից կարող է ծախսել 2500 ռ. բայց միջնակարգ դպրոց դարձնելու գիւղատնտեսական բաժնով այդ միջոցը քիչ է. գոնէ պէտք կլինի տարէնը էլի 1500 ռ. նպաստ, սակայն այդ ժամանակ նա իրօք կդառնայ ամբողջ Արագածի արևմտեան փեշերի վրա տարածուած 50—60 գիւղերի համար կենդրոնական դպրոց։ Հառիճն այն յարմարութիւնն էլ ունի, որ սեպհականատէր է 500 դեսեատին վարելա և արօտատեղերի։ Նոյնպիսի պայմաններում է նաև Համամլու գիւղը իր շրջակայ մօտ 18 գիւղերի համար, որին ըստ իս առ այժմ նպաստելով տարեկան 500 ռ., կարելի է գործը կանոնաւոր հիմքերի վրա դնել։

Չեմ կարող ցաւ ի սիրտ չկրկնել արդէն իմ նախկին զեկուցմանս մէջ շեշտածը, որ մեր ոչ մի դպրոցը չունի ուսումնական պիտոյքներ, գրադարաններ և այլն։

Եթէ կարելի լինի այս 30 դպրոցները բանալ իմ ցոյց տուած չափով, ապա շէնքի համար պիտի յատկացնել 2200 ռ., դպրոցների պահպանութեան համար՝ 9100 ռ. իսկ եթէ Հառիճի դպրոցի նպաստն էլ լինի 1500 ռ. ապա Ալէքսանդրապոլում 43 դպրոցի պահպանութեան և շէնքերի համար հարկաւոր կլինի ընդ ամէնն 12200 ռ., (այստեղ հաշուած է և 8 դպրոցների նպաստ 1600 ռ.) որպիսի գումար, ըստ իս, Ալէքսանդրապոլի նման բազմաթիւ և զուտ հայաբնակ գաւառի համար մեծ գումար չէ։

Ալէքսանդրապոլի գաւառը միայն պարունակում է ամբողջ Կովկասի գիւղական հայ ազգաբնակութեան $^1/_6$ մասը, հետևաբար արդարութեան տեսակէտով կուլտուրական ձեռնարկութիւնների համար ստացուած գումարների $^1/_6$ մասը անշուշտ, պիտի գործադրել այս գաւառում։ բայց եթէ աչքի առաջ ունենանք, որ Զանգեզուրի և Ղարաբաղի կողմերում տեղացի ունևոր դասակարգը, գիւղական բանւոր միութիւնները արդէն ձեռնարկելեն իրանց հայրենիքի

կուլտուրական դրութեան բարւոքման, իսկ Ալ. գաւառը չունի ոչ այդպիսի հարուստ արտացաւ և ոչ բանւորութիւն, այս նպաստի %-ն էլ աւելի պիտի բարձրացնել մինչև 20%-ի 25%-ի։

Վերջացնելով զեկուցումս խնդրում եմ բարեհաճել գոնէ մինչև այս ամսիս վերջը յայտնել ինձ թէ արդեօք այս կարիքի ոքքան մասը կարող է Կուլտուրական Միութիւնը իր վրա վերցնել, որպէս զի դրա համապատասխան գործի ձեռնարկել կարողանամ։

Յարգանքներով լի մնամ աղօթարար՝

Մաթէոս վարդապետ

ՑՈՒՑԱԿ

Բայուած և բացուելիք եկեղեցական ծխական Հայոց երկսեռ դպրոցների Աղէքսանդրապոլի Փոխանորդութեան մէջ և նրանց տրուելիք նպաստի քանակը

Կազմած 20 Յունիսի 1908 ամի

Հերթի թիվ	Գիւղի անունը	Դոցում գտնվում են դպրոց մինչև վերջին տարի	Ունի՞ դպրոցական շէնք և ինչ յարմարութեամբ.	Քանի բաժանմունքից է բաղկացած.
1	Օրթաքիլիսա	չունի նոր պիտի բանալ	Չունի: Որոշելեն հասարակական վճռով նոր դպրոցական շէնք շինել	—
2	Մէծ Սարիար.	ունի	Ունի: Բաղկացած է երկու սենեակից առանց յարմարութեան	Դպրոցը ունէր միայն Ա. և Բ. բաժանմունք մի սենեակում զետեղուած
3	Թաշտաբլի	Ունի	Ունի: Երկու սենեակից բաղկացած	Ունէր երեք բաժանմունք Ա. Բ. և Գ. զետեղուած մի սենեակում
4	Ներքին Ղանլիճա և Վերին Ղանլիճա	Ունի	Ունի: Երկու սենեակից բաղկացած առանց յարմարութեան	Ունէր երկու բաժանմունք Ա. և Բ. մի սենեկում զետեղուած

Քանի ուսուցիչ ունի և ինչ կրթութեամբ.	Սովորողներ		Ի՞նչ աղբիւրներով է կառավարուել և ինչ նոր աղբիւրներ կան.	Ո՞քանդ դրամ է մնացել	Ամսական դրամով	Դանձութիւն
	Տղայ	Աղջիկ				
—	—	—	Բացուելու դէպքում խոստանում են աշակերտական թոշակագրամ և տուրք տալ	—	300	—
Մի ուսուցիչ տնայնի կրթութեամբ	35	—	Թոշակագրամներով կանոնաւորուելու դէպքում խոստանում են տուրքով նպաստել	60ռ.	300	—
Մի ուսուցից ճեմարանի VI ից	65	—	Թոշակագրամ և եկեղեցի մուտքից	250	300	—
Մի ուսուցիչ տաբրական կրթութեամբ	34	—	Աշակերտ. թոշակները և եկեղեցական արդիւնք	185	300	—

5	Դիւզ-քեանդ	Ունի	Ունի. երկու սենեակ. և մի նախասենեակից բաղկացած. յարմարէ. հաս. վճռով որոշելեն ընդարձակել և տախտակամածել	Ունի երկու բաժանմունք Ա. և Բ. մի սենեակում զետեղուած.
6	Ղոնախ-ղուան.	Ունի	Ունի գիւղամիջում մի անյարմար շէնք	Բաղկացած է երկու բաժանմունքից Ա. և Բ. մի սենեակում զետեղուած
7	Զաջուռ	Ունի	Ունի երեք սենեակից բաղկացած յարմարաւոր շէնք	Բաղկացած է Ա. Բ. Գ. բաժ. երկու սենեակում զետեղ.
8	Աղքիլիսա	Ունի	Չունի. այս տարի կառուցւում է յարմարաւոր շէնք 4 սենեակից բաղկացած	Երեք բաժանմունքից բաղկացած զետեղուած երկու սենեակում.
9	Մ.—Բեափանակ	Չունի	—	—
»	Փ.—Բեափանակ			

Մի ուսուցիչ քաղաքային դպրոցի վիկայա կանով	48	—	Թոշակադրանմ և այլ նուէրներ	340	300	Այս տարի իրաւաբան Միքայէլ Բաբաջանեանը նուիրել է այս դպրոցին 100ռ. որից 50ռ. ծախքերի համար, իսկ 50ռ. դպր. շէնքը ընդար.։
Մի ուսուցիչ քաղաքային դպրոցի կրթութեամբ	67	—	Թոշակադրամով	235	300	—
Երկու ուսուցիչ։ 1. Եր. Թ. դպր. աւար. 2ը Ներսիս. III դասարանից	95	3	Թոշակադրամով և եկեղեցու արդ։	485	300	Պ. Միք. Բաբաջանեանը նուիրել է այս տարի մի հարիւր ռուբլի
Երկու ուսուցիչ տեղական քահանան և քաղաք. դպր. եւաճ.	54	6	Թոշակադրամ և այլ նուէներ	218	200	Դպրոցական շէնքի համար Բ. Հ. Կ. Միութիւնը յատկացրել է 200ռ. և դպրոցի պահպանթն. համար ևս տալու է տարեկան 200ռ.
—	—	—	—	—	300	Բացի այս նպաստից ի նկատի ունենալով գիւղերի չքաւորութիւնը, հարկ կլինի նպաստել դպրոցական շէնքի կառուց. 300 ռուբլիով.

10	Ղարալ	Զունի	Զունի. հասարակական վճռով որոշել են նոր շէնք կառուցանել	—
11	Մեծ Պարնի	Զունի	Զունի. հասարակական վճռով որոշել են նոր շէնք կառուցանել	—
12	Աւգիբէկ	Զունի	Զունի	—
13	Մեջիթլի	Զունի	Ունի 1 սենեակից բաղկացած. հասարակ. վճռով. որոշել է նոր դպրոցական շէնք կառուցանել.	—
14	Ղազանչի	Ունի	Ունի բաղկացած երկու յարմար սենեակից	Երեք բաժանմունքից Ա. Բ. և Գ. զետեղուած երկու սենեակում

—	—	—	—	—	300	—
—	—	—	—	—	200	—
—	—	—	—	—	200	—
—	—	—	—	—	300	—
Երկու տարբերական կերթութեամբ.	58	—	Թոշակադրամով և նուէրներով	180	200	Այս դիւղը առաջ ունեցել է կանոնաւոր դպրոց. բայց այժմ չափազանց ընկած է նիւթական պակասութեան եւ համերաշխաբարոյական պատճառով.

15	Փոքր Պարնի	Զունի	Զունի	—
16	Արթիկ	Ունի	Ունի երկու սենեակից բաղկացած. յարմար է, բայց պիտի ընդարձակել	Բաղկացած է երեք բաժանմունքից մի սենեակում զետեղած
17	Ղուլիջան	Զունի	Զունի. Հանդանակած է 435 ռ. նոր դպր. շէնք կառուցանելու համար	—
18	Բաշգիւղ	Ունի	Ունի երեք սենեակից յարմարաւոր շէնք	Բաղկացած է Ա. Բ. Գ. բաժ. երկու սենեակում զետեղած
19	Հառիճ. (Վանական դբպրոց) Ղփչաղ	Ունի	Ունի յարմարաւոր շէնք	Բաղկացած է հինգ բաժանմունքից չորս սենեակում զետեղած.

—	—	—	—	—	300	—
Երկու մէկը Ներս. դպրոցական միւսը քաղաքային	66	4	Թոշակադրամ եկեղեցու նուէր և այլ արդիւնք	1058 33	200	Նպաստ ստանում է Բ. Հ. Կ. Միութիւնից 200 ռ.
—	—	—	—	—	200	—
Երկու ուս. մէկը Ներսիս. դպր. աւարտած միւսը երկդասեան դպրոցից	68	—	Թոշակադրամ եկեղեցու եկամուտ. և այլ նուէրներից	511	200	Նպաստ ստանում է Բ. Հ. Կ. Միութիւնից 200 ռ.
Զորս ուսուցիչ երկուսը ձեմար. VI աւարտած մէկը Հառիճ դպր., մէկը քաղաք. դպր.	97	12	Թոշակներ և վանական եկամուտներ	1800	—	Ցանկալի է այստեղ ունենալ կաթնատնտեսական բաժանմունք. վանքն ունի 500 դես. հող. որ կարող է այդ նպատակին յատկացնել

20	Հոռոմ	Ունի	Ունի կանոնաւոր շէնք երկու սենեակ և մի նախասենեակ	Բաղկացած է Ա.Բ.Գ. բաժ. զետեղած երկու սենեակում
21	Գահաբլի	Ունի	Ունի երկու սենեակից և մի նախասենեակից բաղկացած շէնք յարմար է	Ունէր չորս բաժանմունք երեք սենեակում զետեղուած
22	Խլի Ղաբաքիլիսա	Ունի	Ունի երեք սենեակից բաղկացած շէնք	Ունէր հինգ բաժանմունք երեք սենեակում զետեղուած
23	Թոմաբդաշ	Չունի	Ունի երկու սենեակից և մի նախասենեակից բաղկացած յարմարաւոր շէնք	—
24	Սօնգիւրլի	Չունի	Չունի։ Տեղական քահ. երկու սենեակից բաղկացած շէնք նուիրում է դպրոցին	—

Երկու ուս. մէկը այ- գեգործ միւսը քա- ղաք դըպ- րոցի III դաս.	211	2	Թոշակներից նուիրատու. և եկեղ. եկա- մուտներից	280	300	—
Երկու ու- սուց. մինը ձեմարը Iլս. միւսը քա- ղաքը դպը. աւարտած	50	12	Թոշակադրամ եկեղեցական արդիւնք և նուիրաբերու- թիւնք	630	200	Նպաստ ստա- նում է Բ. Հ. Կ. Միութիւնից 200 ռ.
Երեք ու- սուցիչ մի- նը Երև. Թ. դպը. Եր- կուսը քա- ղաք. դպը. աւարտած	140	22	Թոշակադրամ եկեղեցու արդ. հասար. տուրք և նուիրաբե- ռութիւն	986 94	200	Նպաստ ստա- նում Բ. Հ. Կ. Միութիւնից բայց այս նպաստը քիչէ կանոնաւ. Երկդ. դպը. հմր. հարակա- ւոր է տալ 500 ռ.
—	—	—	—	—	200	—
—	—	—	—	—	300	—

25	Բողազ-քեասան	Զունի	Դպրոցական շէնքը մի սենեակից և մի նախասենեակից. կիսատ է	—
26	Սօգիւթլի	Զունի	Դպրոցական շէնքը երկու սենեակից է բաղկացած, կիսատ, որ գիւղացիք հաս. վճ. խոստացել են լրացնել	—
27	Շերվան Ջուղ	Զունի	Գիւղում կայ մի ամբար, որ որոշելեն յարմարացնել դպրոցի	—
28	Մահմուտ-Ջուղ	Զունի	Ունի բաղկացած մի սենեակից և մի նախասենեակից	—
29	Զիթիհան-քով	Զունի	Կառուցւում է նոր դպրոցական շէնք յարմարաւոր:	—

—	—	—	—	—	300	Ժոժովրդի աղ-քատութեան պատճառով հարկաւորէ 200 ռ. ևս յատկացնել շէնքի աւարտման համար
—	—	—	—	—	300	—
—	—	—	—	—	300	—
—	—	—	—	—	300	—
—	—	—	—	—	200	Շէնքի համար նպաստ ստացել է Բ.Հ.Կ. Միութիւնից 200 ռ. և որպէսզի գումարը շարունակելու է ստանդպր. պահ. հր. Նոյն Միութիւնից

30	Մեծ Արխ-վալի և Փոքր Արխ-վալի	Ունի	Ունի երեք սենեակից բաղկացած յարմա-բաւոր շինութիւն	Երեք բաժանմունքից Ա. Բ. և Գ. գեռեղ-ուած երկու սենեակի մէջ։
31	Հաջի Խալիլ	Զունի	Զունի. հասարակու-թիւնը խոստանում է կառուցանել, եթէ կողմնակի փոքրիկ նպաստ տրուի	—
32	Նորաշէն	Ունի	Ունի երկու սենեա-կից և մի նախասե-կից բաղկացած շէնք յարմարաւոր	Երեք բաժանմունք Ա. Բ. և Գ. գեռեղ-ուած երկու սենեա-կում
33	Ղզլղոչ	Զունի	Զունի	—
34	Որդնաւ	Զունի	Զունի. հասարակա-կան վճ. որոշելէ նոր շէնք կառու-ցանել	—

Երկու-մէկը ներս. դպր. V դասարը, իսկ միւսը մասնաւոր կրթութեամբ	72	9	Աշակերտական թոշակ, եկեղեց. դումար 0|0 0|0 և նուէրներ	235	300	—
—	—	—	—	—	300	Զբաւորութեան պատճառով հարկաւոր է դոնէ 200ռ. շէնքի կառուցման համար յատկացնելի
Երեք. մէկը աւրտ.քաղ. դպ. ուս. ցենղ միւս. Աղեք. վիճ. դպ. իսկ երր. վարժ. Աղ. իգ. Պրոգիմ.	60	15	Թոշակադրամ, եկեղ. արդ. և նուէրներ	641	300	Երկու տարի է նպաստ ստանում է Պ. Տիգրան Ափրիկեանից տարէնը 200 ռ.
—	—	—	—	—	400	Դպրոցական շէնք կառուցանելու համար անհրաժեշտ է նպաստ տալ մօտ 500 ռ.
—	—	—	—	—	—	—

35	Համամլու	Ունի	Ունի երկու սենեակից բաղկացած բայց հասարակութիւնը նպատակ ունի նոր մեծ շէնք կառուցանել.	Զորս Բաժանմունք դեռեղուած երկու սենեակում.
36	Ղազարապատ.	Զունի	Զունի. Պ. Ա. Իսահակեանի ջանքերով հաս. խոստաց. դպրոցական շէնք կառուցանել	—
37	Նոր Արթիկ	Զունի	Զունի. հաս. վճ. որոշել են շէնք կառուցանել.	—
38	Սամուրլի	Զունի	Զունի. հասար. շէնք խոստանում է կառուցանել, եթէ կոզմնակի նպաստ տրուի.	—
39	Ճղխլաբ	Զունի	Ունի հասարակ շէնք	Երկու բաժանմունք մի սենեակում դեռեղուած.

Երկու, մէկը աւարտելէն ետեր. դպրոցի լսկ երկրորդը վարժ. մասնաւոր կրթութեն.	97	20	Թոշակագրամ հասարակական տուրք	920	500	Ցանկալի է այս դպրոցը դարձնել երկդասեան գիւղատնտեսական բաժանմունքով
—	—	—	—	—	300	—
—	—	—	—	—	300	Կարիք կլինի դպրոցի շէնքի կառուցման համար նպաստ տալ գոնէ 200ռ.
—	—	—	—	—	400	Այս գիւղը չափազանց աղքատ լինելով անհրաժեշտ կլինի շէնքին նպաստել 500 ռ.
Մի ուսուցիչ տարական կրթութեամբ	32	—	Թոշակագրամ և այլ նուէրներ	80	300	Դպրոցական նոր շէնք կառուցանելու համար հարկ կլինի նպաստել 300ռ.

40	Եաղուբլի	Ունի	Զունին. Մանաւորը հասարակ շէնքի մէջ հասարակական վճռով որոշելեն նոր շէնք կառուցանել	Մի բաժանմունք Ա.
41	Ղ.շլաղ.	Ունի	Ունի յարմար շէնք երեք սենեակից բաղկացած	Զորս բաժանմունք. Ա.Բ.Գ. և Դ. երկու սենեակում զետեղած
42	Մեծ Ղաբաքիլիսա	Ունի	Ունի, բայց կարօտէ ընդարձակման	Տղայոց չորս, Օրիորդ. չորս բաժանմունք գուգընթացներով
43	Համզաչիման	Ունի	Ունի յարմար շէնք	Զորս բաժանմունք զետեղուած երկու սենեակում (1908 թ. երկրորդ ուսուցիչ ունենալով երեք սենեակի մէջ զետեղել են սաները)

Մի ուսուցիչ աւարտել է Եր թեմ. Դպրոցը	36	6	Եկեղեցու արդ. թոշակագրամ և նուէրներ	550	200	Նպաստ ստանում է Բ. Հ. Կ. Միութիւնից տարէնը 200ռ.
Երկու մէկն աւարտել է Ներս. դպր. միւսը Եր. թեմ. դպրոցը	82	11	Թոշակագրամ, հասարակ տուրք. եկեղեց արդիւնք և նուէրներ	750	200	Նպաստ ստանում է Բ. Հ. Կ. Միութիւնից 200 ռ. տարէնը
10 Ուսուցիչ բոլորը մնջակ. կրթուած.	197	220	Թոշակագրամ, Թայիրեանի գրամագլխի 0/0-ը և եկեղեց. արդիւնք	4330	—	—
Երեք. մէկն աւարտել է Ներս. դպր. վարժուհին Երևանի դեմ. Երորդ. քհնյ. Հառիճի դպրոցը	86	80	Հասարակ. տուրք աշակերտ. թոշակ այլ նուէրներ	930	—	—

Փոխանորդի Թեմական Երևանայ Վիճակին Ալէքսանդրապոլու Բարձրագոյն Հայր Մատթէոս վարդապետին։

Խնդրում ենք ներողութիւն, որ Ձեր գրութեան № 1448 Օգոստոսի 6-ից պատասխանը ուշացաւ մեզանից անկախ պատճառով,

Ամսոյս 20-ին միայն ստացանք Ս. Պ. Ե. Խորհրդի № 277 գրութիւնը, որով խորհուրդը յայտնում է մեզ, որ 1908—1909 թ. ուսումնական տարուայ համար, ըստ մեր ազատ տնօրինութեան յատկացնում է 8000 բուբլի, ի պահպանութիւն հայ շինական նախակրթարանների։

Ս. Պ. Ե. խորհուրդը մի պարտականութիւն է դնում Միութեանս վերայ, այն է, 15 շրջաններից ամէն մէկում անպայման մի մի գպրոց բանալ կենտրոնական գիւղում։ Այդ շրջանները հետևեալներն են. 1) Զանգեզուրի մէջ. 2) Սիսեան (օր. Բռնակոթ) 3) Ղափան (օր. Առաջաձոր 4) Դողթան (օր. Երնջակ) 5) Հին Նախիջևան (օր. Ջահրի) 6) Դարալագեազ (օր. Էրտափին կամ Աղաւնաբոյն. 7) Շարուր. 8) Գեօք-չայ (օր. Ադեաման) 9) Աբարան.. (օր. Ալիքուչակ) 10) Շորագեալ (օր Հառիճ) 11) Լոռի. 12) Փամբակ (օր. Համամլու. 13) Ղազախ (օր. Ճամբարակ) 14) Ղարս (օր. Բազրան կամ Ճալա) և 15) Ախալքալակ։

Ամսոյս 24-ի և 27-ի նիստերին Դպրոցական Սեկցիայի Բիւրօն կայացրեց հետևեալ որոշումները։

1) Անցեալ տարուայ Ձեր ջանքերով բացուած ութը դպրոցներին այս տարի ևս նպաստ տալ ամէն մէկին 200 բուբլի (16)0 բ.) երկու դպրոցների նպաստը Ս. Պ. Հ. Ե. Խորհրդի գումարներից, իսկ մնացած 6 դպրոցների նպաստը մասնաւոր նուիրատուութիւններից։

2) Ս. Պ. Հ. Ե. Խորհրդի գումարներից յատկացնել երկու դպրոցի համար ևս ամէն մէկին 300 բ. (երկուսին

600 ր.), այդ դպրոցների տեղը որոշելը թողնում է Ձեր հայեցողութեանը: Միայն Բիւրօն ցանկութիւն է յայտնում, որ նրանցից մէկը բացուի Բաշ-Նօրագեալում:

3) Յատկացնել Հառիճու վանքի դպրոցին, նրան Շիրակի կենտրոնական դպրոց դերձնելու համար գիւղատնտեսական բաժնով 1200 ր., որը կազմում է Ս. Պ. Ե. Խորհրդի գումարներից 700 ր., պ. Սահաբրիգեանի նպաստը 300 ր. պ. Գ. Կ. Կոստանեանցի նպաստը 200 ր: Մենք ցաւում ենք, որ հնարաւորութիւն չունենք Ձեր խնդրած գումարը 1500 ր. լիովին յատկացնել այդ դրպրոցին, սակայն աչքի առաջ ունենալով որ այդ դպրոցը ամենից շատ յարմարութիւն ունի կենդրոնական դառնալու գիւղատնտեսական բաժնով և շատերի ցանկութիւնն է, որ նա լինի օրինակելի դպրոց Շիրակում, մենք կաշխատենք հետևեալ տարիներում նիւթապէս աւելի ապահովել այդ դպրոցը, իսկ Ձերդ Բարձրապատուութիւնից խնդրում ենք առանձին ուշադրութիւն դարձնել այդ դպրոցի ուսուցչական կազմի վերայ եւ նախ քան վերջնական որոշում կայացնելը, մեզ յայտնել այդ դպրոցի ուսուցչական կազմի մասին:

4) Յատկացնել Համամլի գիւղին Ս. Պ. Հ. Ե. Խորհրդի գումարներից նպաստ 300 ր.: Մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ Կովկասի Բարեգործական Ընկերութիւնը նպաստ է տուել այդ գիւղին. (գուցէ սխալ է մեր տեղեկութիւնը). Եթէ յիրաւի այդ գիւղը ստացել է նպաստ, այդ դէպքում բաց անել Փամբակում մի այլ կենտրոնական գիւղում, ըստ Ձեր հայեցողութեան, դրպրոց և յատկացնել այդ 300 ր. նրան:

5) Յատկացնել Ապարանի Ալիքուչակ գիւղին Ս. Պ. Հ. Ե. Խորհրդի գումարներից 500 ր.: Այդ գիւղը Ձեր շրջանից դուրս է, սակայն եթէ հնարաւորութիւն ունէք բանակցելու, խնդրում ենք հոգ տանել, որ այդ գիւղում անպատճառ դպրոց բացուի: Քաջ գիտենալով այդ շրջանի աղքատութիւնը և յետամնացութիւնը, Բիւրօն որոշեց տալ 500 ր., որ դպրոցը բացուի, եթէ նոյն իսկ գիւղա-

կան համայնքը չը կարողանայ դրամով նպաստել. սկզբունքով անպայման ցանկալի է, որ նրանք դրամական, թէկուզ չնչին օգնութիւն հասցնեն դպրոցին:

Այսպիսով ուրեմն Միութեանս կրթական ս՝կցիան այս 1908—1909 թ. ուսումնական տարուայ համար յատկացրել է Ձեր շրջանի համար 3700 թ.:

1. Ութը դպրոցի համար 1600 ր.
2. Երկու դպրոցի համար 600 »
3. Հառիճու դպրոցին 1200 »
4. Համամլի, կամ մի որ և է գիւղ 300 »:

Խոնարհաբար խնդրում ենք Ձեզ, այլ և այլ փոփոխութիւնների մասին, նոյնպէս և նոր դպրոցն՝ ի յայտնել մեզ, ուղարկելով նոյնպէս և համախօսականները:

Ցանձնելով Ձեր աղօթքներին

Մնամ յարգանօք՝

Նախագահ Կրթական Բիւրոյի Գ. Գասպանեան

Քարտուղար՝ Ա. Ճգնաւորեան

280գոստոի 1908 թ.
Բաքու.

ՅՈՒՅԱԿ

Ալէքսանդրապոլի վիճակի եկ.—ծխական դպրոցների որոնք նպաստ են ստանում եւ ներկայ 190⁸/₉ ուս. տարում պիտի ստանան Բազուի Հայոց Կուլտուրական միութիւնից

№ ըստ կարգի	Գեղի անունը	Դրամի քանակը	Երբ է եղել	Ծանօթութիւն
1	Եաղուբլի	200 ռ.	190⁷/₈	ուս. տարուց սկսած
2	Ղշլաղ	200 »	»	» »
3	Աղքիլիսա	200 »	»	» »
4	Խլի Ղարաքիլ.	200 »	»	» »
5	Դահարլի	200 »	»	» »
6	Արթիկ	200 »	»	» »
7	Բաշգիւղ	200 »	»	» »
8	Զիթահանքով	200 »	»	» »
9	Համամլու	300 »	190⁸/₉	» »
10	Ջաջուռ	300 »	»	(90⁷/₈ ուս. տ. Միք. Բաբաջանեանից 100 ռ.)
11	Դիւզքեանդ	300 »	»	(190⁷/₈ ուս. տ. Միք. Բաբաջան. 100 ռ.)
12	Սամուրլի	250 »	»	միջնորդութիւն է յարուցած յատկացնել Ալիքիւչակին յատ գումարից
13	Թումարպաշ	200 »	»	» » յատկացնել Դաստակեանի նուէրը:
14	Սեօնգիւրլի	250 »	»	միջնորդութիւն է յարուցած Ալիքիւչակի գումարից յատկացնել:
15	Սեօղիւթլի	300 »	»	Բաղդասարեանի գումարը
16	Ղփչաղ (Հառ.)	1200 »	»	Գիւղատնտեսական բաժնի համար:
17	Ն. Ղանլիճա	200 »	»	Ջհանգիր Առաքելեան նուէրը